# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
# ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020,28125183
yeghegnadzor@gmail.com,yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 օգոստոսի 2025 թվականի N 440-Ա

## ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով, հիմք ընդունելով Եղեգնաձոր համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 119-Ն որոշման 1-ին հավելվածի 15-րդ կետի 4-րդ ենթակետը և «Իմիջ Մ․ Գ․» ՍՊԸ-ի հայտը․

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Եղեգնաձոր համայնքի, Եղեգնաձոր քաղաքի Սևակի փողոցում գտնվող գովազդային վահանակի վրա «Պեպսի» գովազդի տեղադրման նպատակով՝ «Իմիջ Մ․ Գ․» ՍՊԸ-ին տալ թույլտվություն՝ 2025 թվականի օգոստոս ամսվա համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2025 թ. օգոստոսի 05
ք. Եղեգնաձոր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ**
**ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020,28125183
yeghegnadzor@gmail.com,yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 օգոստոսի 2025 թվականի N 441-Ա

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 50-րդ կետերը, Եղեգնաձոր համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 119-Ն որոշման 2-րդ հավելվածի 19-րդ կետը, Գլաձորի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 1991 թվականի մարտի 15-ի N 2 որոշման քաղվածքը և քաղաքացի Մարինե Հովանիսյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Քաղաքացի Մարինե Վազգենի Հովանիսյանին հատկացված անշարժ գույքին (կադաստրային ծածկագիր՝ 10-015-0026-0030) տրամադրել հետևյալ հասցեն՝ Եղեգնաձոր համայնք, գյուղ Գլաձոր, 32-րդ փողոց, 3 հողամաս:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2025 թ. օգոստոսի 05
ք. Եղեգնաձոր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ**
**ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020,28125183
yeghegnadzor@gmail.com,yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am


# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 օգոստոսի 2025 թվականի N 442-Ա

## ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով, հիմք ընդունելով Եղեգնաձոր համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 119-Ն որոշման 1-ին հավելվածի 15-րդ կետի 4-րդ ենթակետը և «ԲիԹիԷլ Սերվիսիս» ՍՊԸ-ի հայտը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Եղեգնաձոր համայնքի, Եղեգնաձոր քաղաքի Միկոյան փողոցում՝ Ե. Նչեցու արձանի հարևանությամբ գտնվող գովազդային վահանակի վրա «Պեպսի» գովազդի տեղադրման նպատակով՝ «ԲիԹիԷլ Սերվիսիս» ՍՊԸ-ին տալ թույլտվություն՝ 2025 թվականի օգոստոս ամսվա համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2025 թ. օգոստոսի 05
ք. Եղեգնաձոր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ**
**ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020,28125183 yeghegnadzor@gmail.com,yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 օգոստոսի 2025 թվականի N 443-Ա

## ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի պահանջներով, հիմք ընդունելով Գլաձորի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 1991 թվականի մարտի 15-ի N 2 որոշման քաղվածքը, առաջին պետական գրանցման հանգամանքը և քաղաքացի Մարինե Հովանիսյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Ճանաչել քաղաքացի Մարինե Վազգենի Հովանիսյանի (ծնված՝ 15.06.1964թ.) սեփականության իրավունքը Եղեգնաձոր համայնքի Գլաձոր բնակավայրի 32-րդ փողոց, 3 հասցեում գտնվող, հողաբաժնի չափից ավել օգտագործվող 392.6 քմ բնակելի կառուցապատման հողամասի նկատմամբ:

2. Սույն որոշման առաջին կետում նշված ավել օգտագործվող 392.6 քմ հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին և այդ իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և չի առաջացնում սերվիտուտ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2025 թ. օգոստոսի 06
ք. Եղեգնաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
# ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020,28125183 yeghegnadzor@gmail.com,yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

06 օգոստոսի 2025 թվականի N 444-Ն

## ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Եղեգնաձոր համայնքի ավագանու 2025 թվականի հունվարի 21-ի՝ «Եղեգնաձոր համայնքի 2025 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 02-Ն որոշման 2-րդ կետը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Եղեգնաձոր համայնքի ավագանու 2025 թվականի հունվարի 21-ի թիվ 02-Ն որոշմամբ հաստատված բյուջեում կատարել հետևյալ վերաբաշխումը՝

Պակասեցնել՝ գործառնական դասակարգման՝ 01.01.01 (օրենսդիր և գործադիր մարմինների պետական կառավարում) ոլորտի՝ տնտեսագիտական դասակարգման 4267 (կենցաղային և հանրային սննդի նյութեր) հոդվածից՝ 1 000 000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ և այն ավելացնել 4241 (մասնագիտական ծառայություններ) հոդվածին՝ վերագնահատման աշխատանքների ֆինանսավորման համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ «ԵՂԵԳՆԱՁՈՐ» ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ * 08917624 *

2025 թ. օգոստոսի 06
ք. Եղեգնաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
# ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020,28125183 yeghegnadzor@gmail.com,yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 օգոստոսի 2025 թվականի N 445-Ա

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԸ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ, ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 50-րդ կետերը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 30-ի N 1730-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջները, Եղեգնաձոր համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 119-Ն որոշման 2-րդ հավելվածի 19-րդ կետը և սեփականատեր Վարդան Վարդանյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1 . Քաղաքացի Վարդան Սպարտակի Վարդանյանին սեփականության իրավունքով պատկանող Եղեգնաձոր համայնք, ք. Եղեգնաձոր, Զորավար Անդրանիկի փողոց, 12/34 (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 10102024-10-0002) և ք. Եղեգնաձոր, Անդրանիկի փողոց, 12/2 (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական 24062020-10-0002) հասցեներում գրանցված անշարժ գույքերը միավորել տրամադրելով հետևյալ հասցեն՝ Եղեգնաձոր համայնք, քաղաք Եղեգնաձոր, Զորավար Անդրանիկի փողոց, 12/2 հողամաս ։

2. Սույն որոշման 1-ին կետում նշված ք. Եղեգնաձոր, Անդրանիկի փողոց, 12/2 (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական

24062020-10-0002) հասցեում գրանցված բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման 0.0018 հա մակերեսով, 10-001-0051-0019 կադաստրային ծածկագրով հողամասի գործառնական նշանակությունը փոխել՝ դարձնելով բնակելի կառուցապատման:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2025 թ. օգոստոսի 06
ք. Եղեգնաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
# ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020,28125183 yeghegnadzor@gmail.com,yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 օգոստոսի 2025 թվականի N 446-Ա

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 30-ի N 1730-Ն որոշման պահանջների, հիմք ընդունելով քաղաքացի Մամիկոն Հայկարամի Սարդարյանի 2025 թվականի հուլիսի 28-ի դիմումը (մուտքի թիվ՝ 721դ), այն հանգամանքը, որ Եղեգնաձոր համայնքի Գետափ բնակավայրի 12-րդ փողոց, 5 հասցեում ինքնակամ կառուցված շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում կյանքին և առողջությանը, կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի վրա, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման ու անվտանգության գոտիներում, քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Եղեգնաձոր համայնքի Գետափ բնակավայրի 12-րդ փողոց, 5 հասցեում գտնվող, Մամիկոն Հայկարամի Սարդարյանին, Էլմիրա Ֆրունզիկի Դանիելյանին և Արման Մամիկոնի Սարդարյանին սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 1424297) ինքնակամ կառուցված՝ ըստ չափագրման տվյալների 99.20 քմ արտաքին մակերեսով և 76.31 քմ ներքին մակերեսով շինությունը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2023KESNSM) ճանաչել օրինական:

2. Առաջարկել կառույցն իրականացրած Մամիկոն Հայկարամի Սարդարյանին (ծնված՝ 19.08.1959թ.), Էլմիրա Ֆրունզիկի Դանիելյանին (ծնված՝ 02.07.1962թ.) և Արման Մամիկոնի Սարդարյանին (ծնված՝ 30.08.1991թ.) շինության օրինականացման համար Եղեգնաձորի համայնքապետարանի 900355101099 հաշվեհամարին վճարել՝ 1 քմ շինության համար 1209 (մեկ հազար երկու հարյուր ինն) ՀՀ դրամ, ընդամենը՝ 119933 (մեկ հարյուր տասնինը հազար ինը հարյուր երեսուներեք) ՀՀ դրամ՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 6-ի թիվ 1023-Ն որոշմամբ հաստատված գործակիցները:

3 . Կառույցը համապատասխանում է համայնքային նշանակության քաղաքաշինության համալիր ծրագրով նախատեսված գոտիներում գտնվող կառույցների ծրագրերի պայմաններին:

4. Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը 60 օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2025 թ. օգոստոսի 06
ք. Եղեգնաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
## ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020,28125183 yeghegnadzor@gmail.com,yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 օգոստոսի 2025 թվականի N 447-Ա

## ՊԱՎԼԻԿ ՆԱՐԻԲԵԿԻ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ, ՄԱՐԳՈ ԹՈՐԳՈՄԻ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ, ԱՐԹՈՒՐ ՊԱՎԼԻԿԻ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ԵՎ ԱՆՆԱ ՊԱՎԼԻԿԻ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-րդ մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 56-րդ հոդվածի 3-րդ, 101-րդ հոդվածի 1-3 մասերով, հիմք ընդունելով քաղաքացիներ Պավլիկ Նարիբեկի Մկրտչյանի, Մարգո Թորգոմի Մկրտչյանի, Արթուր Պավլիկի Մկրտչյանի և Աննա Պավլիկի Մկրտչյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Եղեգնաձոր համայնքի Գլաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող, քաղաքացիներ Պավլիկ Նարիբեկի Մկրտչյանին, Մարգո Թորգոմի Մկրտչյանին, Արթուր Պավլիկի Մկրտչյանին և Աննա Պավլիկի Մկրտչյանին համատեղ սեփականության իրավունքով պատկանող գյուղատնտեսական նշանակության ներքոնշյալ վարելահող հողատեսքերը ճանաչել համայնքային սեփականություն՝

1) 0.063 հա, կադաստրային ծածկագիր՝10-015-0314-0133 (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 1344502)

2) 0.077 հա, կադաստրային ծածկագիր՝10-015-0314-0127 (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 1344511)

3) 0.164 հա, կադաստրային ծածկագիր՝10-015-0314-0119 (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 1344513)

4) 0.093 հա, կադաստրային ծածկագիր՝10-015-0314-0124 (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 1344512)

5) 0.062 հա, կադաստրային ծածկագիր՝10-015-0314-0098 (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 974881)

6) 0.067 հա, կադաստրային ծածկագիր՝10-015-0314-0128 (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 1344503)

7) 0.087 հա, կադաստրային ծածկագիր՝10-015-0314-0116 (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 974878)

2. Սույն որոշումն օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել պետական գրանցման:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2025 թ. օգոստոսի 06
ք. Եղեգնաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
# ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020,28125183
yeghegnadzor@gmail.com,yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ու Մ

**08 օգոստոսի 2025 թվականի N 448-Ա**

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 50-րդ կետերը, Եղեգնաձոր համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 119-Ն որոշման 2-րդ հավելվածի 19-րդ կետը և համասեփականատեր Էդվարդ Ալեքսանյանի դիմումը.

*ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝*

1. Էդվարդ Մաղլենի Ալեքսանյանին,Սոֆիկ Ռազմիկի Ալեքսանյանին,Արմեն Էդվարդի Ալեքսանյանին,Արմինե Էդվարդի Ալեքսանյանին համատեղ սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքին (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ N 962218) տրամադրել հետևյալ հասցեն՝ Եղեգնաձոր համայնք, գյուղ Մալիշկա, 22-րդ փողոց, 8 հողամաս :
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* *Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*

2025 թ. օգոստոսի 08
ք. Եղեգնաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
# ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020,28125183
yeghegnadzor@gmail.com,yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 օգոստոսի 2025 թվականի N 449-Ա

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 50-րդ կետերը, Եղեգնաձոր համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 119-Ն որոշման 2-րդ հավելվածի 19-րդ կետը և համասեփականատեր Հեկտոր Գևորգյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հեկտոր Հայրապետի Գևորգյանին, Ժենյա Բաբկենի Գևորգյանին, Նելլի Հեկտորի Գևորգյանին, Վահիկ Հեկտորի Գևորգյանին համատեղ սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքին (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ N 2323293) տրամադրել հետևյալ հասցեն՝ Եղեգնաձոր համայնք, գյուղ Գլաձոր, 7-րդ փողոց, 4 բնակելի տուն :

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2025 թ. օգոստոսի 08
ք. Եղեգնաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
# ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020,28125183
yeghegnadzor@gmail.com,yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 օգոստոսի 2025 թվականի N 450-Ա

## ԳՈՌ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով, «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 15-րդ մասով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Վերնաշեն բնակավայրի վարչական ղեկավար Գոռ Առաքելյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Գոռ Արմենի Առաքելյանին ազատել Եղեգնաձոր համայնքի Վերնաշեն բնակավայրի վարչական ղեկավարի պաշտոնից՝ սույն թվականի օգոստոսի 11-ից:

2. Կատարել վերջնահաշվարկ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համաձայն:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2025 թ. օգոստոսի 08
ք. Եղեգնաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
# ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020,28125183
yeghegnadzor@gmail.com,yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 օգոստոսի 2025 թվականի N 451-Ա

## ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՎԵՐՆԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով և «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 15-րդ մասով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Արմեն Անդրուշի Գրիգորյանին նշանակել ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնքի Վերնաշեն բնակավայրի վարչական ղեկավարի պաշտոնում՝ սույն թվականի օգոստոսի 11-ից:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2025 թ. օգոստոսի 08
ք. Եղեգնաձոր